371
4-21

17 MAY 2013

Համաձայնեցրած է Ադր. Լ. Կ. Ցեմ
Կ. Կ-ի հետ

1 MAR 2010

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

I. ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

§1.

Աշակերտական կազմակերպությունները, համախմբելով դպրոցի բոլոր աշակերտներին միասնական, մտերմական կոլեկտիվում, ժամանակում են ուսուցչությանը՝ սոցիալիստական հայրենիքին նվիրված դիտակից, ազնիվ, դրական, կուլտուրական և կարգապահ քաղաքացիներ դաստիարակելու գործում:

§2.

Աշակերտական կազմակերպությունները ձգտում են, վորպեսզի յուրաքանչյուր աշակերտ սովորի լավ, կանոնավոր պատրաստի դասերը, լինի կուլտուրական, կարգապահ, ընկերական, բոլոր յերեխաների հետ մտերիմ, քաղաքավարի՝ ուսուցչի և մեծերի հետ, պահպանի սոցիալիստական սեփականությունը և բարձր պահի իր դասարանի և դպրոցի պատիվը:

II. ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ՅԵՎ, ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԴՊՐՈՑՈՒՄ

§3.

I–IV Դասարաններում ուսուցիչներն աշակերտներից նշանակում են հերթապահություն: Հերթապահները հետևում են դասարանի մաքրությանը, դասամիջոցներին ողջունում են դասասենյակը, ողնում են ուսուցչին՝ դրենական պիտույքների, ուսումնական պարագաների, ընթերցանության դրքերի բաժանման գործում: Ուսուցիչը բոլոր աշակերտներին ներգրավում է սոցիալիստական մրցության անցկացման, դասարանի զարդարման, դպրոցական ցերեկույթների, եքսկուրսիաների, զրոսանքների կազմակերպման, կենդանի անկյունը խնամելու, դասարանը կանաչազարդելու, յեղանակի հասարակ որացույցը գրանցելու և այլ գործի մեջ:

III–IV դասարաններում ուսուցիչն ամիսը մի անգամ անց է կացնում աշակերտների ընդհանուր դասարանական ժողով՝ դասարանի և առանձին աշակերտների աշխատանքի լավացման հարցերի շուրջը:

4133
39

371
Կ-21

01.5.2013
45.570

§4.

[illegible] դասարանից սկսած ընդհանուր դասարանական ժողովում ընտրվում է դասարանի կազմակերպիչ—մի ուսումնական կիսամյակի ժամկետով:

Դասարանական կազմակերպիչներն աշխատում են դասարանի ղեկավարի և աշակերտական կոմիտեի ղեկավարությամբ՝ սերտ կապ պահպանելով դասարանի պիոներական ջոկատի խորհուրդի, իսկ VIII–IX դասարաններում՝ կոմսոմոլի կազմակերպիչների հետ:

Դասարանի կազմակերպիչը կատարում է հետևյալ աշխատանքները.—

ա. Զգտում է, որ բոլոր աշակերտները կատարեն դպրոցական ներքին կանոնները.

բ. Դասարաններում և կաբինետներում աշակերտներից նշանակվում է հերթապահներ ու հետևում նրանց.

գ. Ուսուցչի ղեկավարությամբ, դասարանի հետ մնացած աշակերտների համար կազմակերպում է ընկերական փոխօգնություն.

դ. Օգնում է դասարանի ղեկավարներին սոցիալիստական մրցություն կազմակերպելու և ստուգելու գործում:

դ) Ընդգրկում է իր դասարանի աշակերտներին զանազան դպրոցական խմբակներում (առարկայական, գեղարվեստական, պաշտպանա - ֆիզկուլտուրային, տեխնիկական):

ե. Սովորողներին ներգրավում է դպրոցական գրադարանի ընթերցողների շարքը:

ը. Ուսուցչի հետ միասին կազմակերպում և անց է կացնում էքսկուրսիաներ, զբոսանքներ, յերեկույթներ, տոնակատարություններ և կինոթատրոն, թանգարաններ, ցուցահանդեսներ հաճախելու գործը:

Այս աշխատանքները կատարելու համար դասարանի կազմակերպիչը ներգրավում է դասարանի բոլոր աշակերտներին:

Յուրաքանչյուր քառորդի վերջում, դասարանի կազմակերպիչն ընդհանուր դասարանական ժողովում հաշվետվություն է տալիս իր կատարած աշխատանքների մասին:

Դասարանի կազմակերպիչը դասարանի առաջադիմության, կարգապահության խնդիրները քննարկելու համար հրավիրում է դասարանական ժողովներ.

Դասարանական ժողովներում դասղեկի ներկայությունը պարտադիր է:

§5.

Վոչ լրիվ միջնակարգ դպրոցի V–VII դասարանների և լրիվ միջնակարգ դպրոցի V–X դասարանների ընդհանուր աշակերտական ժողովում, կամ այդ դասարանների ներկայացուցիչների աշակերտական կոնֆերանսներում բաց քվեարկությամբ ընտրվում է 5–7 հոգուց բաղկացած աշակերտական կոմիտե, մի ուսումնական կիսամյակի ժամկետով:

Աշակերտական կոմիտեյում ընտրվում են դպրոցի լավագույն, և առավել ակտիվ սովորողները, վոր ընկերների մոտ մեծ հեղինակություն են վայելում:

Աշակերտական կոմիտեի անդամներն աշխատում են կոմիտեի առանձին առաջադրանքների գծով:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Աշակերտական կոնֆերանսներն անց են կացվում սովորողների մեծ քանակություն ունեցող դըպրոցներում՝ շրջլուսբաժնի և ԼԿԵՄ շրջկոմի թույլատվությամբ:

§6.

Աշակերտական կոմիտեն կատարում է հետևյալ աշխատանքները.

ա. Կազմակերպում է սոցիալիստական մրցություն՝ լավ և գերազանց ուսման ու գիտակցական կարգապահության ամրապնդման համար և կիրառում է աշակերտների կողմից վերցրած պարտավորությունների սիստեմատիկ ստուգում.

բ. Իր նիստերում աշակերտական կոմիտեն դպրոցի դիրեկտորի մասնակցությամբ քննարկում է ուսման վորակի բարձրացման և սովորողների մեջ կարգապահության ամրապնդման վերաբերյալ միջոցառումները.

գ. Կազմակերպում է համադպրոցական խմբակներ (գիտական, տեխնիկական, գեղարվեստական) դասախոսություններ, զեկուցումներ զանազան թեմաների վերաբերյալ:

դ. Աշկերտներին ներգրավում է հասարակական աշխատանքներում հասարակա - քաղաքական կամպանիաների անցկացման գծով, անգրագիտության, կիսագրագիտության վերացման և կամավոր ընկերությունների աշխատանքներում:

գ. Քննարկում է սովորողների արտադասարանային աշխատանքների պլանը.

ե. Կազմակերպում է դասարանական կազմակերպիչների աշխատանքները, անհրաժեշտ ոգնություն է ցույց տալիս և ստուգում նրանց աշխատանքները:

Աշակերտական կոմիտեն, կոմսոմոլի, պիոներական կազմակերպությունների հետ միասին՝

ա. Հրատարակում է ընդհանուր դպրոցական պատի թերթ:

բ. Պատրաստում և անց է կացնում հեղափոխական տոնակատարություններ, ինքնագործունեության յերեկույթներ և այլ մասսայական միջոցառումներ:

գ. Կազմակերպում է պաշտպանական - ֆիզկուլտուրային աշխատանքը սովորողների մեջ — ռազմական խմբակներ, ՊԱԳ, ՊՍԳ, ՀՈՔԳ կրծքանշանների նորմաների հանձնումը և կապ է հաստատում Կարմիր Բանակի զորամասերի հետ:

դ. Աշակերտական կոմիտեն դպրոցի դիրեկտորի հրավերով, իր ներկայացուցիչների միջոցով մասնակցում է մանկավարժական խորհրդի նիստերին՝ աշակերտական կոմիտեյի աշխատանքներին վերաբերվող բոլոր հարցերը քննարկելիս:

699

Առաջին կիսամյակում դասարանական կազմակերպիչներն ընտրվում են սեպտեմբերի 10–20-ը, իսկ երկրորդ կիսամյակում հունվարի 13–23-ը:

Աշակերտական կոմիտեներն ընտրվում են սեպտեմբերի 20-ից մինչև հոկտեմբերի 1-ը և հունվարի 23-ից մինչև 28-ը:

Մինչև աշակերտական կազմակերպությունների ընտրությունները դպրոցում անհրաժեշտ է ծավալել մասսայական – բացատրական աշխատանք աշակերտական կազմակերպությունների դերի և նշանակության մասին: Այս աշխատանքը կատարվում է ուսուցչության, կոմսոմոլի և պիոներ կազմակերպությունների միջոցով, դպրոցի դիրեկտորի և կոմսոմոլի կազմակերպչի ղեկավարությամբ.

III. ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ.

§ 8

Աշակերտական կոմիտեն աշխատում է դպրոցի դիրեկտորի և կոմսոմոլի կազմակերպության ղեկավարությամբ:

Աշակերտական կոմիտեյի աշխատանքի պլանը հաստատում է դպրոցի դիրեկտորը:

Աշակերտական կոմիտեյի նիստերը հրավիրվում են ամսական մեկ անգամից վոչ պակաս:

Աշակերտական կոմիտեյի առանձին նիստերին հրավիրվում են և դասարանների դասղեկավարները:

Աշակերտական կոմիտեյի բոլոր նիստերին դպրոցի դիրեկտորի կամ ուսումնական մասի վարիչի ներկայությունը պարտադիր է:

ԱԴՐ. ԽՍՀ ԼՈՒՍԺՈՂԿՈՄ

Սեպտեմբերի 2-ին 1939 թ. Բաքու:

Պատ. թողարկու Գ. ՍԵՎՈՒՆՑ

Главлит № 7065. Заказ № 3146. Тираж 2000. Сдано в набор 5/XI-1939 г.
Подписано к печати 8/X-1939 г. Тип. зн. 12000, 1/4 печ. л.
Типография „III Интернационал", Баку, ул. Саратовци-Ефимова, 29.

«Ազգային գրադարան»
NL0225598

45. 570